	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>Էջ 1/14</i>

## ՆՊԱՏԱԿԸ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական անվտանգության ապահովման սկզբունքները, Բանկի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման միջոցառումները, միջազգային սանկցիաների և «Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին» (FATCA) ԱՄՆ օրենքի պահանջների պահպանման մոտեցումները:

## ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն քաղաքականության դրույթները տարածվում և ենթակա են կատարման Բանկի կառավարման մարմինների, բոլոր ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների կողմից:

## ԱՌՆՉԿՈՂ ՓԱՏՍԱԹԻՐԵՐ

ՅՅ քրեական օրենսգիրք	
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՅՅ օրենք	
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ» (հաստատված ՅՅ ԿԲ խորհրդի 07.10.2004թ. թիվ 279-Ն որոշմամբ)	
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կանոնակարգ	ACBA 55 REG 15
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և միջազգային սանկցիաների պահպանման մասին կարգ	ACBA 72 ORD 37


## ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Օրենք»՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՅՅ օրենք.

«Գույք»՝ ՅՅ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ցանկացած տեսակի նյութական բարիքներ, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտներ, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցներ, արժեթղթեր և գույքային իրավունքներ, գույքային իրավունքներ կամ շահերը հավաստող փաստաթղթեր կամ այլ միջոցներ, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսներ, շահութաբաժիններ կամ այլ եկամուտներ, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքներ.

«Փողերի լվացում» (ՓԼ)՝ ՅՅ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում).

«Ահաբեկչության ֆինանսավորում» (ԱՖ)՝ ՅՅ քրեական օրենսգրքի 217.1-ին հոդվածի համաձայն՝ ահաբեկչության ֆինանսավորումը՝ գույքի ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով տրամադրումը կամ հավաքագրումը՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ պետք է օգտագործվի կամ կարող է օգտագործվել ահաբեկչության կամ անձին պատանդ վերցնելու կամ պատանդ պահելու արարքների կատարման համար կամ ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը՝ գիտակցելով, որ այդ ծառայություններն ուղղված են ահաբեկչության կամ անձին պատանդ վերցնելու կամ պատանդ

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>		<b>MANUAL 14#6</b>	
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>

պահելու արարքների կատարմանը, կամ դրանց արդյունքներն օգտագործվելու են ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից.

**«Ահաբեկչության հետ կապված անձ»**՝ ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձ, որը ներառվել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ Լիազորված մարմնի հրապարակված ցանկերում.

**«Լիազոր մարմին»**՝ ՀՀ կենտրոնական բանկ.

**«Ավագ ղեկավարություն»**՝ Բանկի ֆինանսական անվտանգության բաժին, որն իրավասու է Բանկի անունից ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու.

**«Գործարք»**՝ Բանկի և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձանց միջև գործարք, որը կատարվում է Բանկի միջոցով կամ հանդիսանում է Բանկի ուսումնասիրության (դիտարկման) առարկա: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն.

**«Միանգամյա գործարք»**՝ գործարք, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում.

**«Փոխկապակցված միանգամյա գործարքներ»**՝ միևնույն կողմի մասնակցությամբ միատեսակ բնույթի միանգամյա գործարքներ, որոնք կատարվում են 24 ժամվա ընթացքում.

**«Գործարար հարաբերություն»**՝ Բանկի կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով: Գործարար հարաբերությունը չի ներառում Բանկի այն գործունեությունը, որի շրջանակներում Բանկը սեփական կարիքների համար իրականացնում է բանկերի համար օրենսդրությամբ սահմանված գործունեությունից տարբեր այլ գործունեություն.

**«Հաճախորդ»**՝ Բանկի հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ, ինչպես նաև անձ, որը Բանկին առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք.

**«Իրական շահառու»**՝ ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է և (կամ) որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը կամ անձ, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է: Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝


ա) քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները կամ՝

բ) հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ կամ՝

գ) գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

**«Լիազորված անձ»**՝ հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողություններ իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձ.

**«Իրավաբանական անձ»**՝ ՀՀ և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ հիմնարկ, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 3/14</i>

իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորում.

**«Հաճախորդի գործարար բնութագիր»**՝ հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամայն գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերվող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ Բանկի տեղեկությունների (պատկերացումների) ամբողջություն.

**«Ճանաչիր հաճախորդի սկզբունք (KYC)»**՝ միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք, որն ենթադրում է հաճախորդի նույնականացման տվյալների հավաքագրման, հաճախորդի գործարար բնութագրի պարզաբանման, վերջինիս վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների պարբերաբար թարմացման պահանջ և կիրառվում է հաճախորդի ու նրա կողմից կատարված գործարքների պատշաճ ուսումնասիրության իրականացման համար.

**«Գործարքի մյուս կողմ»**՝ հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) է կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը.

**«Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն»**՝ Բանկի կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց, որը ներառում է՝

ա) հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացումը և ինքնության ստուգումը,

բ) գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը,

գ) գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը.

**«Ռիսկ»**՝ ՓԼ/ԱՖ վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների.

**«Բարձր ռիսկի չափանիշ»**՝ Օրենքով, Լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ, որը վկայում է ՓԼ/ԱՖ բարձր հավանականության մասին, այդ թվում՝

- քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները,

- անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են բարձր ռիսկային երկրներում (մասնավորապես, Չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում, ՕՖՉորային երկրներում կամ տարածքներում, Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկրներում, Բարձր կոռուպցիոն ռիսկ ունեցող երկրներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են).

- բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները,

- անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:

Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում բարձր ռիսկի չափանիշի առկայությունը Լիազոր մարմնի և Բանկի նախատեսված դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.


**«Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն»**՝ Բանկի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում, որի դեպքում, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն՝

ա) ստանալ Ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,

բ) ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,

գ) հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,

դ) քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>		<b>MANUAL 14#6</b>	
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>

դիտարկում.

**«Ցածր ռիսկի չափանիշ»**՝ Օրենքով կամ Լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ, որը վկայում է ՓԼ/ԱՖ ցածր հավանականության մասին, այդ թվում՝

• ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,

- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական ոչ առևտրային կազմակերպությունները,
- պետական կառավարչական հիմնարկները,

Բացառություն են կազմում Չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում, Օֆշորային երկրներում կամ տարածքներում, Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկրներում, Բարձր կոռուպցիոն ռիսկ ունեցող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինները կամ կազմակերպությունները: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում ցածր ռիսկի չափանիշի առկայությունը Լիազոր մարմնի նախատեսված դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

**«Հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն»**՝ Բանկի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառում, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝

- ա) ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
- բ) իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),
- գ) պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը.

**«Քաղաքական ազդեցություն ունեցող անձ»**՝ արտասահմանյան երկրի կամ տարածքի նախկին կամ գործող բարձրաստիճան պետական պաշտոնատար անձ, որն իրականացրել է կամ իրականացնում է պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառնություններ: Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի հանրային գործառնություններ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

- ա) պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
- բ) խորհրդարանի անդամները,
- գ) բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների անդամների, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,
- դ) աուդիտորների դատարանի անդամները կամ կենտրոնական բանկի խորհրդի անդամները,
- ե) դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,
- զ) քաղաքական կուսակցության ակնառու գործիչները,
- է) պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները.

**«Օֆշորային երկիր կամ տարածք»**՝ Լիազոր մարմնի կողմից հրապարակվող օֆշորային երկրների կամ տարածքների ցանկում ընդգրկված երկիր կամ տարածք.


**«Չհամապատասխանող երկիր կամ տարածք»**՝ Լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիր կամ տարածք.

**«Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկիր»**՝ երկիր, որի հանդեպ կիրառված են միջազգային սանկցիաներ, մասնավորապես՝ Եվրամիության, Ֆրանսիայի կամ ԱՄՆ (OFAC) կողմից.

**«Բարձր կոռուպցիոն ռիսկ ունեցող երկիր»**՝ երկիր, որն ունի բարձր կոռուպցիոն ռիսկ՝ ըստ «Transparency International» կազմակերպության «Corruption Perceptions Index» դասակարգման.

**«Կենսական շահերի կենտրոն»**՝ վայր, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը.

**«Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն»**՝ գործարք կամ գործարար հարաբերու-

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 5/14</i>

թյուն, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.

**«Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշ»**՝ Լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված՝ ՓԼ/ԱՖ հնարավորության մասին վկայող իրավիճակ կամ ազդակ.

**«Տիպարանություն»**՝ Լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված՝ ՓԼ/ԱՖ ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա.

**«Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում»**՝ կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք.

**«Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում»**՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացում.

**«Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում»**՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատում.

**«Գույքի սառեցում»**՝ ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելք, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելք, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելք.

**«Կեղծ («շել») բանկ»**՝ բանկ, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ.

**«Տարանցիկ հաշիվ»**՝ Բանկում բացված թղթակցային հաշիվ, որն ուղղակիորեն օգտագործում է թղթակից ֆինանսական հաստատության հաճախորդը՝ իր անունից գործարքներ կատարելու համար.

**«FATF»**՝ միջկառավարական մարմին, որի նպատակն է զարգացնել և տարածել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային և միջազգային քաղաքականությունները (The Financial Action Task Force).

**«Միջազգային սանկցիաներ»**՝ երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների և անձանց նկատմամբ կիրառված միջազգային էմբարգոներ, գույքի սառեցման պահանջներ.

**«FATCA»**՝ «Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին» ԱՄՆ օրենք:

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**


**Ա Ռ Ա Ջ Ի Ն Բ Ա Ժ Ի Ն**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

1.1. Սույն քաղաքականությունը մշակվել է համաձայն Օրենքի, Լիազոր մարմնի խորհրդի որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի և այլ իրավական ակտերի պահանջների, «FATF»-ի ստանդարտների, միջազգային լավագույն փորձի, իսկ «FATCA»-ի մասով՝ նաև միջկառավարական համաձայնագրի:

1.2. Բանկում ֆինանսական անվտանգության գործընթացը ներդրված է ներքոհիշյալ հիմնական նպատակների համար՝

- Բանկում «ճանաչիր հաճախորդդ» սկզբունքի ներդրում և կիրառում,

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 6/14</i>

- ՓԼ/ԱՖ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառում,
- կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների հայտնաբերում և Լիազոր մարմնին ներկայացում,
- միջազգային սանկցիաների պահպանման համար՝ հաճախորդների և փոխանցումների ստլյալների ստուգման համակարգերի կիրառում,
- «FATCA» պահանջների պահպանում,
- ֆինանսական անվտանգության գծով Բանկի աշխատակազմի ուսուցման կազմակերպում,
- պատշաճ կերպով ֆինանսական անվտանգության գծով տեղեկությունների և փաստաթղթերի պահպանման կազմակերպում:

1.3. Բանկում ֆինանսական անվտանգության գործընթացի ներդրումը և վերահսկողությունն իրականացվում է Ֆինանսական անվտանգության բաժնի կողմից, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, միջազգային ստանդարտներով և պահանջներով, Բանկի կանոնադրությամբ, սույն քաղաքականությամբ, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կանոնակարգով [ACBA 55 REG 15](#), «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և միջազգային սանկցիաների պահպանման մասին կարգով [ACBA 72 ORD 37](#), ինչպես նաև Բանկի այլ ներքին իրավական ակտերով, Բանկի խորհրդի հանձնարարականներով, Գլխավոր գործադիր տնօրենի հրամաններով ու կարգադրություններով:

1.4. Ֆինանսական անվտանգության բաժինը՝

1.4.1. սույն քաղաքականությամբ և դրա հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ է և ունի ավագ ղեկավարության կարգավիճակ,

1.4.2. իրավունք ունի Բանկի խորհրդին անմիջականորեն ներկայացնելու Բանկի ֆինանսական անվտանգության ոլորտում ծագած խնդիրները, ինչպես նաև մասնակցելու Բանկի խորհրդի կողմից ֆինանսական անվտանգության առնչվող հարցերի քննարկմանը:

1.5. Ֆինանսական անվտանգության բաժնին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են Բանկի կողմից ձեռք բերվող ու պահպանվող օրենսդրությամբ և սույն քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը):

1.6. Ֆինանսական անվտանգության բաժնի աշխատակիցները պետք է Լիազոր մարմնի սահմանված կարգով և մասնագիտական համապատասխանության չափանիշների հիման վրա ունենան որակավորում, համապատասխանեն Լիազոր մարմնի կողմից սահմանված այլ չափանիշներին:

1.7. Ֆինանսական անվտանգության բաժնի աշխատակիցները նշանակվում և ազատվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ Բանկի խորհրդի համաձայնությամբ:

1.8. Բանկի գլխավոր գործադիր տնօրենն ապահովում է Բանկի խորհրդի կողմից հաստատված սույն քաղաքականության ներդրումը, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացումը:

1.9. Բանկը պարտավորվում է ապահովել արտասահմանյան երկրներում կամ տարածքներում, ներառյալ Չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող իր դուստր կազմակերպությունների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կողմից սույն քաղաքականության սահմանում և ավելի խիստ նորմեր, քան դուստր կազմակերպության, մասնաճյուղի կամ ներկայացուցչության գտնվելու երկրի կամ տարածքի օրենքներն ու այլ իրավական ակտերը: Եթե դուստր կազմակերպության, մասնաճյուղի կամ ներկայացուցչության գտնվելու երկրի կամ տարածքի օրենքներն ու այլ իրավական ակտերն արգելում են կամ հնարավորություն չեն տալիս կիրառելու սույն քաղաքականության պահանջները, ապա Բանկը տեղեկացնում է դրա մասին Լիազոր մարմնին:


## Ե Ր Կ Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

### ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

## ԳԼՈՒԽ 2. ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ, ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Բանկը բացահայտում և գնահատում է իր ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը և ունի բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման և զսպման քաղաքականություն, վերահսկման



	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 7/14</i>

մեխանիզմներ և ներքին իրավական ակտեր:

2.2. Բանկը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ վերանայում է իր՝ ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը:

2.3. Բանկը բացահայտում և գնահատում է ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը: Ընդ որում՝ սույն կետով սահմանված ռիսկերը բացահայտվում և գնահատվում են մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:

2.4. Բանկը Լիազոր մարմնին է ներկայացնում ՓԼ/ԱՖ վերաբերյալ տեղեկատվությունները, այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները:

2.5. Բանկը Լիազոր մարմնին հաշվետվություն է ներկայացնում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության և (կամ) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ:

2.6. Կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը ներկայացվում է անկախ գումարի չափից:

2.7. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներն են՝

ա) անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար կամ գերազանցում է 20 միլիոն դրամը,

բ) կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար կամ գերազանցում է 5 միլիոն դրամը:

2.8. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվության տրամադրման պարտականությունից ազատելու դեպքերը սահմանում է Լիազոր մարմինը:

2.9. Բանկին, Բանկի աշխատակիցներին և ներկայացուցիչներին արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություններ են տրամադրվում Լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման փաստի մասին:

### ԳԼՈՒԽ 3. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԾՈՎ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1. Բանկի խորհուրդը՝

- սահմանում և հաստատում է սույն քաղաքականությունը և ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերը,

- հաստատում է Ֆինանսական անվտանգության բաժնի և ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, հսկողություն է իրականացնում այդ ծրագրերի իրագործման նկատմամբ,

- անհրաժեշտության դեպքում հանձնարարում է Ֆինանսական անվտանգության բաժնին կատարել ուսումնասիրություններ, հաստատում է աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,

- քննարկում և հաստատում է ներքին աուդիտի եզրահանգումները, ինչպես նաև իր սահմանված հաճախականությամբ, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ՝ Ֆինանսական անվտանգության բաժնի հաշվետվությունները:

3.2. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը՝


- ապահովում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտի օրենսդրության և ներքին իրավական ակտերի ամբողջական և արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,

- ապահովում է Բանկի աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում պատշաճ ուսուցումը,

- ապահովում է Ֆինանսական անվտանգության բաժնի ուսումնասիրությունների, աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

3.3. Ֆինանսական անվտանգության բաժինը վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովում է Լիազոր մարմնին Օրենքով և սույն քաղաքականությամբ սահմանված հաշվետվությունների տրամադրումը և Բանկի կողմից ընդունված այլ ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացումը:

3.4. Ֆինանսական անվտանգության բաժինը գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>		<b>MANUAL 14#6</b>	
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>

կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ իր կայացրած որոշման մասին տեղեկացնում է Բանկի գլխավոր գործադիր տնօրենին և խորհրդին, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Լիազոր մարմնին տրամադրելուց, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո:

3.5. Ֆինանսական անվտանգության բաժինը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է Բանկի կատարած գործարքների և հաստատված գործարար հարաբերությունների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունն Օրենքին, սույն քաղաքականությանը և դրա հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև Լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ Ֆինանսական անվտանգության բաժինը հաշվետվություն է ներկայացնում Բանկի խորհրդին:

3.6. Բանկը, Բանկի աշխատակիցները (ղեկավարները) չեն կարող ենթարկվել գույքային քրեական, վարչական կամ այլ պատասխանատվության Օրենքով նախատեսված իրենց պարտականությունները պատշաճ կատարման համար:

#### **ՉԼՈՒԽ 4. ՓԼ/ԱՖ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

4.1. Բանկում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս ներդրված է ռիսկի կառավարման ընթացակարգ, որը բացառում և գնահատում է հնարավոր կամ առկա ռիսկերը և ապահովում է ռիսկերին համարժեք միջոցների ձեռնարկումը:

4.2. Բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում Բանկն իրականացնում է հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն, իսկ ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում՝ հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն:

4.3. Պարզեցված ուսումնասիրություն չի կարող իրականացվել ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի չափանիշի կամ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության դեպքում:

4.4. Բանկը հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնում է նաև առկա հաճախորդների նկատմամբ՝ այդ հաճախորդների հետ կապված ռիսկերի և դրանց էականության հիման վրա:

#### **ՉԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱԾ ՌԻՍԿԻՆՍՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5.1. Բանկում արգելվում է բացել, թողարկել, տրամադրել կամ սպասարկել՝

- ա) անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ,
- բ) միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ,
- գ) ըստ ներկայացնողի արժեթղթեր:

5.2. Բանկում արգելվում է թղթակցային կամ համանման այլ հարաբերություններ հաստատել կեղծ («շել») բանկերի հետ:


5.3. Բանկը հաճախորդների հետ չի հաստատում գործարար հարաբերություններ առանց առերես շփման:

5.4. Բանկը կարող է հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատել կամ միանգամյա գործարք կատարել միայն հաճախորդի նույնականացման համար սույն քաղաքականության 5.6 կետով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո: Բանկը կարող է Օրենքով նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա հաճախորդի ինքնությունը ստուգել նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա ժամկետում, եթե ռիսկն արդյունավետորեն կառավարվում է, և դա անհրաժեշտ է հաճախորդի հետ բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:

5.5. Բանկն իրականացնում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, երբ՝

- ա) հաստատվում է գործարար հարաբերություն,
- բ) կատարվում է միանգամյա գործարք (փոխկապակցված միանգամյա գործարքներ), որի գումարը հավասար կամ գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը,
- գ) կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերվող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ անբողջականության վերաբերյալ,



	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 9/14</i>

դ) կասկածներ են առաջանում ՓԼ/ԱՖ վերաբերյալ:

5.6. Բանկը հաճախորդին նույնականացնում և նրա ինքնությունը ստուգում է պետական իրավասու մարմնի տրված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա: Ընդ որում՝

- ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատերի համար անձը հաստատող փաստաթղթի կամ բացառապես լուսանկարով՝ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև հաշվառման համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունները: Բանկն իրականացնում է համապատասխան գործողություններ նաև հաճախորդի բնակության վայրը պարզելու համար:

- իրավաբանական անձի համար պետական գրանցման փաստաթղթի կամ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը և, առկայության դեպքում, հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունները:

- պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:

5.7. Հաճախորդների հետ գործարար հարաբերությունների հաստատման կամ միանգամյա գործարքների կատարման համար Բանկը պահանջում է նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները, որոնք պետք է լինեն գործող՝ վերջին խմբագրությամբ և ժամկետում:

5.8. Բանկը պարզում է, թե արդյոք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին: Բանկը՝

- պարզում է լիազորված անձի առկայությունը և առկայության դեպքում նույնականացնում լիազորված անձին, ստուգում նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը:

- պարզում է իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում նույնականացնում իրական շահառուին, ստուգում նրա ինքնությունը:

5.9. Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում Բանկը հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով լիարժեք տեղեկատվություն է հավաքագրում այդ իրավաբանական անձի (բացառությամբ արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների) մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ:


5.10. Բանկը պարզում է հաճախորդի գործարար բնութագիրը, ինչպես նաև ճշտում գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը:

5.11. Եթե հաճախորդն օտարերկրյա իրավաբանական անձ է կամ օտարերկրյա ֆիզիկական անձ կամ օտարերկրյա իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ, ապա Բանկը պարզում և գրառում է նաև այդ անձի կենսական շահերի կենտրոնը:

5.12. Բանկը հատուկ միջոցառումներ է ձեռնարկում քաղաքական ազդեցություն ունեցող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների կամ նրանց հետ փոխկապակցված այլ անձանց (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) բացահայտելու նպատակով՝ դրա համար կիրառելով հատուկ տեղեկատվական բազաներ և ծրագրային ապահովում:

5.13. Հաճախորդի (այդ թվում՝ Լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացման և ինքնության ստուգման և գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզման գործողություններն իրականացնելիս Բանկի համար կարող են հիմք ծառայել այլ ֆինանսական հաստատության կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները հետևյալ պայմանների բավարարման դեպքում:

1) Բանկը վերջնական պատասխանատվություն է կրում հաճախորդի պատշաճ ուսումնասիրության համար:

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 10/14</i>

2) Բանկն այլ ֆինանսական հաստատությունից կամ ոչ ֆինանսական հաստատությունից կամ անձից անմիջապես ստանա սույն քաղաքականության 5.4-ից 5.6 և 5.8-ից 5.10 կետերով նախատեսված տեղեկությունները.

3) Բանկը բավարար միջոցներ է ձեռնարկում հավաստիանալու, որ այլ ֆինանսական հաստատությունը կամ ոչ ֆինանսական հաստատությունը կամ անձը՝

ա) իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները,

բ) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից ենթակա է պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև ունի Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր,

գ) չի գտնվում կամ բնակվում Չհամապատասխանող երկրում կամ տարածքում կամ Չհամապատասխանող երկրներից կամ տարածքներից չէ:

5.14. Բանկը հաճախորդի գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնում է դրա պատշաճ ուսումնասիրություն: Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է Բանկի կողմից հաճախորդների հետ գործարքների դիտանցումը՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:

5.15. Բանկը սահմանված հաճախականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, թարմացնում է հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները՝ դրա արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով:

5.16. Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային կամ համանման այլ հարաբերությունների ընթացքում, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պահանջների, Բանկը՝

ա) հավաքագրում է բավարար տեղեկություններ, որպեսզի ամբողջությամբ պարզի թղթակից հաստատության գործունեության բնույթը և, հիմք ընդունելով հրապարակային ու այլ արժանահավատ տեղեկությունները, գնահատում է թղթակից հաստատության գործարար համբավն ու դրա նկատմամբ իրականացվող վերահսկողության որակը, ներառյալ այն, թե արդյոք այդ ֆինանսական հաստատությունը ներգրավված է եղել կամ տվյալ պահին ներգրավված է ՓԼ/ԱՖ հետ կապված քրեական հետապնդման կամ որևէ այլ վարույթի մեջ,

բ) գնահատում է թղթակից հաստատության կողմից իրականացվող՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ընթացակարգերը, հավաստիանալու համար, որ դրանք բավարար են և արդյունավետ,

գ) հաստատում է թղթակցային կամ համանման այլ հարաբերություն Ավագ ղեկավարության հավանությունից հետո,

դ) փաստաթղթավորում է թղթակից հաստատություններից յուրաքանչյուրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխան պարտականությունները, եթե դրանք հստակորեն հայտնի չեն:

5.17. Բանկը թղթակցային կամ համանման այլ հարաբերությունների ընթացքում չի բացում տարանցիկ հաշիվներ:

5.18. Բանկը դրամական փոխանցումների ուղարկման դեպքում ձեռք է բերում և պահպանում հետևյալ տեղեկությունները՝


ա) փոխանցում կատարողի և փոխանցումը ստացողի անունը, ազգանունը կամ անվանումը,

բ) փոխանցում կատարողի և փոխանցումը ստացողի հաշիվների համարները (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը),

գ) փոխանցում կատարողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ ֆիզիկական անձի համար, կամ անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն)՝ իրավաբանական անձի համար:

5.19. Սույն քաղաքականության 5.18 կետում նշված տեղեկությունները ներառվում են նաև փոխանցմանն ուղեկցող վճարման հանձնարարականում:

5.20. Սույն քաղաքականության 5.18 կետով սահմանված պարտականությունները չեն տարածվում կրեդիտային, դեբետային կամ կանխավճարային քարտերով իրականացվող գործարքների նկատմամբ,

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 11/14</i>

Եթե գործարքի կատարման և ձևակերպման (հաշվառման) համար հիմք հանդիսացող բոլոր հաղորդագրություններում (ուղեկցող գրություններում) առկա է այդ քարտերի համարների վերաբերյալ տեղեկատվությունը: Սույն բացառությունը վերաբերվում է այն դեպքերին, երբ գործարքը կապված է ավտոմատ գանձման սարքերի միջոցով գումարների կանխիկացման, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարման հետ, և չի վերաբերվում այն դեպքերին, երբ կրեդիտային, դեբետային կամ կանխավճարային քարտերն օգտագործվում են վճարումների որևէ համակարգում դրամական փոխանցումներ կատարելու համար:

5.21. Այն դեպքում, երբ Բանկը հանդիսանում է դրամական փոխանցման մեջ ներգրավված միջնորդ կամ դրամական փոխանցումը ստացող՝ Բանկը, կիրառելով ռիսկերի վրա հիմնված մոտեցումը, բացահայտում և անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում (այդ թվում՝ գործարքի մերժում կամ կասեցում) այն փոխանցումների նկատմամբ, որոնք չեն ներառում սույն քաղաքականության 5.18 կետի նախատեսված տեղեկությունները: Սույն քաղաքականության 5.18 կետով սահմանված տեղեկությունները չներառող դրամական փոխանցումների դեպքում Բանկը դիտարկում է դրամական փոխանցման մեջ ներգրավված ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային կամ համանման այլ հարաբերությունների դադարեցնելու հարցը:

## ԳԼՈՒԽ 6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ

6.1. Բանկը Օրենքով և սույն քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) կարող է հավաքագրել և պահպանել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

6.2. Բանկը պահպանում է Օրենքով և սույն քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը)՝ անկախ նրանից, թե գործարքը կամ գործարար հարաբերությունը շարունակվում է, թե դադարեցվել է:

6.3. Բանկն Օրենքով և սույն քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պահպանում է գործարար հարաբերության ավարտից հետո կամ գործարքի կատարումից հետո առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենսդրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:


6.4. Բանկն Օրենքով և սույն քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) հավաքագրում և պահպանում է այնպես, որպեսզի դրանք բավարար լինեն Լիազոր մարմնի կամ, օրենսդրությամբ սահմանված դեպքերում, քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից հարցվող հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ յուրաքանչյուր դեպքում ամբողջական ու լիարժեք տեղեկությունների տրամադրման համար:

6.5. Բանկը ապահովում է Օրենքով և սույն քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) ժամանակին և օրենսդրությամբ սահմանված կարգով հասանելիությունն իրավասու վերահսկող և քրեական հետապնդում իրականացնող մարմինների, ինչպես նաև աուդիտորների համար:

## ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼԸ

7.1. Բանկը գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որակում է որպես կասկածելի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է տրամադրում Լիազոր մարմնին, եթե առկա է կասկած կամ բավարար հիմքեր կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է, կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

7.2. Բանկը դիտարկում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ Լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու հարցը այն դեպքում, երբ դիտարկվող իրավիճակն ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 12/14</i>

տիպաբանություններին, կամ Բանկի համար ակնհայտ է դառնում, որ թեև կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներից կամ տիպաբանություններից, դրա կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ նպատակով: Սույն կետի սահմանված դեպքերում, եթե դիտարկման արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակավորվում և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրվում Լիազոր մարմնին, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները Բանկի կողմից փաստաթղթավորվում և պահպանվում են օրենսդրության սահմանված կարգով և ժամկետում:

**ԳԼՈՒԽ 8. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՍ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ**

8.1. Բանկը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության դեպքում իրավունք ունի մինչև 5 օրով, իսկ Լիազոր մարմնի հանձնարարականի ստացման դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել Լիազոր մարմնին:

8.2. Լիազոր մարմնին իրավասու է գործարքը կամ գործարար հարաբերությունը մինչև 5 օրով կասեցնելու, ինչի վերաբերյալ որոշումը Բանկը կատարում է անմիջապես՝ այն Բանկի կողմից ստանալու պահից:

8.3. Բանկի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման մասին Լիազոր մարմնին տեղեկացնելու կամ Լիազոր մարմնի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պահից 5 օրվա ընթացքում Լիազոր մարմնին որոշում է կայացնում քրեական հետապնդում իրականացնող մարմիններին ծանուցում տրամադրելու հիմքերը պարզելու նպատակով կասեցման ժամկետը 5 օրով (բացառիկ դեպքերում՝ 10 օրով) երկարաձգելու կամ կասեցման որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին: Սույն մասում նշված ժամկետում Լիազոր մարմնի որոշումը Բանկին չտրամադրելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած:


8.4. Բանկի կամ Լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն Լիազոր մարմնին՝ իր նախաձեռնությամբ կամ Բանկի միջնորդությամբ, եթե պարզվի, որ ՓԼ/ԱՖ կասկածը հիմնավոր չէ:

8.5. Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել սույն քաղաքականության 5.4-ից 5.10 կետերով նախատեսված պարտականությունները, կամ Լիազոր մարմնի որոշման համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման հանձնարարականի ստացման դեպքերում Բանկը պարտավորվում է մերժել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը և դիտարկի այն սույն քաղաքականության համաձայն կասկածելի որակելու հարցը:

8.6. Այն դեպքում, երբ սույն քաղաքականության 5.4 կետի 2-րդ նախադասության հիման վրա գործարար հարաբերություն հաստատելուց հետո հնարավոր չէ իրականացնել 5.4-ից 5.10 կետերով նախատեսված պարտականությունները կամ Լիազոր մարմնի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման հանձնարարական ստանալու դեպքում Բանկը պարտավորվում է դադարեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և դիտարկի այն սույն քաղաքականության համաձայն կասկածելի որակելու հարցը:

8.7. Բանկը մերժում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկին հավասար կամ դրան գերազանցող անդրսահմանյան դրամական փոխանցման ցանկացած պահանջ, եթե բացակայում է սույն քաղաքականության 5.18 կետով սահմանված տեղեկատվությունը, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը չգերազանցող անդրսահմանյան դրամական փոխանցման ցանկացած պահանջ, եթե բացակայում է սույն քաղաքականության 5.18 կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված տեղեկությունները և դիտարկի այն սույն քաղաքականության համաձայն կասկածելի որակելու հարցը:

8.8. Բանկի կողմից անմիջապես, առանց հաճախորդին նախապես տեղեկացնելու, ենթակա է սառեցման ՄԱԿ-ի խորհրդի բանաձևերով, դրանց համաձայն կամ Լիազոր մարմնի կողմից հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը: Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերը հրապարակում է

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 13/14</i>

Լիազոր մարմինը՝ իր ինտերնետային կայքում:

8.9. Բանկը պարտավորվում է ահաբեկչության հետ կապված անձանց հասկացությանը համապատասխանող անձանց վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում հայտնել Լիազոր մարմինին:

8.10. Բանկն ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու դեպքում՝ գործարքը կամ գործարար հարաբերությունն անմիջապես որակում է կասկածելի և տրամադրում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

## Ե Ր Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

#### ԳԼՈՒԽ 9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

9.1. Բանկը ձեռնարկում է միջազգային սանկցիաների պահանջների (մասնավորապես՝ ՄԱԿ-ի, Եվրամիության, Ֆրանսիայի և ԱՄՆ կողմից կիրառված) պահպանման համապատասխան միջոցառումները՝ համբավի ռիսկ չկրելու նպատակով:

9.2. Բանկը պահպանում է միջազգային սանկցիաների հետևյալ տեսակները՝

- երկրների հանդեպ կիրառված էմբարգոները,
- երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների հանդեպ կիրառված էմբարգոները,
- անձերի հանդեպ կիրառված էմբարգոները,
- գույքի սառեցման պահանջները:

#### ԳԼՈՒԽ 10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԳԾՈՎ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

10.1. Բանկը ներքին իրավական ակտերով սահմանում է էմբարգոների տակ գտնվող երկրների, երկրների կամ տարածքների ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների նկատմամբ Բանկի կողմից կիրառվող մոտեցումները և սահմանափակումների շրջանակը:

10.2. Բանկն իրականացնում է հաճախորդների և փոխանցումների տվյալների միջազգային սանկցիաների տակ գտնվող անձանց ցանկերով ստուգում:

10.3. Բանկում կիրառվում են միջազգային սանկցիաների տակ գտնվող անձանց հետևյալ ցանկերը՝

- ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված ցանկեր.
- Եվրամիության և Ֆրանսիայի կողմից սահմանված ցանկեր.
- ԱՄՆ «US Department of the Treasury» պետական մարմնի կողմից սահմանված «OFAC» ցանկեր.
- Բանկի կողմից սահմանված ցանկ:

10.4. Բանկը միջազգային սանկցիաների տակ գտնվող անձանց ցանկերով ստուգման համար կիրառում է հատուկ ծրագրային ապահովում:

10.5. Բանկը հետևում է միջազգային սանկցիաների տակ գտնվող անձանց ցանկերում կատարվող փոփոխություններին և դրանք թարմացնում խելամիտ ժամկետում:

10.6. Բանկում միջազգային սանկցիաների տակ գտնվող անձանց սպասարկումը և վերջիններիս գործարքները կատարվում են՝ հաշվի առնելով միջազգային սանկցիաների պահանջները:


10.7. Բանկը միջազգային սանկցիաների պահպանման շրջանակում հավաքագրված տեղեկատվությունը պահպանում է՝ համաձայն սույն քաղաքականության 6-րդ գլխի կանոնների:

## Չ Ո Ր Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

### «FATCA» ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

#### ԳԼՈՒԽ 11. «FATCA» ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

11.1. «FATCA» գործընթացը Բանկում ներդնելիս Բանկը կարող է օգտվել արտաքին խորհրդատվական կազմակերպության ծառայությունից:

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>MANUAL 14#6</b>		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 11/09/14</i>	<i>Խմբագրություն 1</i>	<i>էջ 14/14</i>

11.2. Բանկը կնքել է ԱՄՆ հարկային ծառայության (IRS) հետ համագործակցության պայմանագիր և ստացել համապատասխան նույնականացման համարը (GIIN):

## ԳԼՈՒԽ 12. «FATCA» ՊԱՅԱՆՁՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԳԾՈՎ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

12.1. Բանկը ներքին իրավական ակտերով սահմանում է «FATCA» պահանջների կիրառման մոտեցումները:

12.2. «FACTA» պահանջների գծով հաճախորդների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է համաձայն «Ճանաչիր հաճախորդիդ» սկզբունքի մոտեցումների և շրջանակի:

12.3. Բանկը «FATCA» պահանջների պահպանման շրջանակում հավաքագրված տեղեկատվությունը պահպանում է համաձայն սույն քաղաքականության 6-րդ գլխի կանոնների:

# Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

## ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ԳԼՈՒԽ 13. ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13.1. Բանկը Լիազոր մարմնի սահմանված դեպքերում և հաճախականությամբ իրականացնում է ներքին աուդիտ՝ Օրենքով և սույն քաղաքականությամբ նախատեսված պարտականությունների և գործառնությունների պատշաճ իրականացումը վերստուգելու համար:

13.2. Ներքին աուդիտի եզրահանգումները (այդ թվում՝ ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարման հաշվետվության ՓԼ/ԱՖ կանխարգելման բաժնի) պատշաճ կերպով ներկայացվում են Լիազոր մարմնին՝ Բանկի խորհրդի հաստատելուց հետո մեկշաբաթյա ժամկետում:

13.3. Բանկը Լիազոր մարմնի սահմանված կարգով, Լիազոր մարմնի պահանջով կամ իր նախաձեռնությամբ հրավիրում է արտաքին աուդիտ՝ վերստուգելու ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության, սույն քաղաքականության և այլ պահանջների ներդրման և արդյունավետության մակարդակը:

13.4. Բանկը պարբերաբար ուսուցում է կազմակերպում ֆինանսական անվտանգության թեմայով Բանկի խորհրդի, գործադիր մարմնի, ֆինանսական անվտանգության բաժնի, հաճախորդների սպասարկման և ներքին աուդիտի գործառնություններն իրականացնող, ինչպես նաև ֆինանսական անվտանգության ապահովման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների համար:

13.5. Բանկի նոր աշխատակիցների համար ֆինանսական անվտանգության թեմայով ուսուցումը Բանկը կազմակերպում է աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

13.6. Բանկն իրականացված ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալների և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը հաշվառում և պահպանում է առնվազն 5 տարի:

### ԳԼՈՒԽ 14. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Սույն քաղաքականության այն դրույթները, որոնց կիրառումը ենթադրում է Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերի ընդունում, ուժի մեջ են մտնում այդ ակտերը գործողության մեջ դնելու օրվանից:

14.2. Գործող օրենսդրության մեջ հետագայում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվելու դեպքում Բանկն առաջնորդվում է այդ փոփոխություններով և (կամ) լրացումներով՝ մինչև սույն քաղաքականության օրենսդրության նոր պահանջներին համապատասխանեցնելը:

14.3. Սույն քաղաքականության հաստատման, ինչպես նաև դրանում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվելու դեպքում՝ Բանկը մեկշաբաթյա ժամկետում քաղաքականության օրինակը ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկ:

14.4. Սույն փաստաթղթին պարտադիր կերպով պետք է ծանոթանան Բանկի բոլոր աշխատակիցները:

14.5. Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտնում 2014 թվականի նոյեմբերի 25-ից: